Զապել Եսայան

Նամակ Զուլիա Փուշմանին

1931, ապրիլի 25, Բարիզ

Զուլիա Փուշմանին

Կպատրաստվեի քեզ գրելու, երբ այս առավոտ ստացա ամուսնույդ նկարահանդեսի հայտագիրը: Դժբախտաբար միայն ցուցակը ալքե անցնելով պիտի բավականանամ և միակ լուսանկարը, որ կա մեջ, մտածել կուտա ինձ, որ պարոն Փուշման, ինչպես միշտ, այս անգամ ալ հաջողած է խլել բազմախորհուրդ արևելքի խոր գաղտնիքներեն մի քանին և կտավին վրա սևեռել գույներու այն ուղու համանվագը, որ իր հոգիին մեջ ունի: Կմաղթեմ իրեն այն լայն ու ամբողջական հաջողությունը, որուն այնքան արժանի է և որը ամեն բանե առաջ իրեն պիտի տա բարոյական բավականություն: Մեծ հույս ունիմ նաև, որ այդ ցուցահանդեսեն հետո կորոշեք Բարիզ գալ: Եվ ինչպե՞ս այս տարի Բարիզ չի գաք, երբ գաղութային ցուցահանդեսը դեպի ի Բարիզ կքաշե ամեն երկրներե մեծ բազմություններ:

Մեծապես կհուսամ, որ քու նամակդ այդպիսի լավ լուր մը պիտի բերե ինձ: Նախորդ նամակումս մանրամասն գրեր էի իմ աշխատության ծրագիրներուս վրա: Միշտ կշարունակեմ աշխատիլ և հույս ունիմ, որ հանգրվանե հանգրվան պիտի հասնիմ նպատակիս: Դժվարություններ շատ կան, բայց ի՞նչ մարդ կըլլայի, եթե դժվարություններու առաջ կանգ առնեի և ո՞վ չունի կամ չէ ունեցած դժվարություններ:

Սոֆիս և Հրանտս լավ են և առողջ: Սոֆին միշտ իր պաշտոնին վրա է և Հրանտս ուսումը կշարունակե: Երկու տարիեն կհուսամ, որ հաջողի դառնալ Jhdenieur

chimique և ես ալ շունչ կառնիմ: Ձեր զավակները ինչպե՞ս են: Կհուսամ, որ հանգիստ են և գոհ իրենց զբաղումներեն:

Սիրելի Յուլիաս, մի մոռնար ինձ և անմիջապես գրե: Հիշե Սկյուտարի վարդաշատ պարտեզները ու ծաղկյալ ու բուրումնավետ ճամբարները, որոնց վրայեն անցած ենք հույսերով և երազներով լեցուն: Այն Սկյուտարը, որ կար, չիկա այլևս, բայց միայն մեր հիշողության մեջ և երկուքով հիշել և պահպանել մեր կյանքի գեղեցկագույն պահերը անքակտելի կապ մըն է: Միշտ, երբ կվերհիշեմ իմ պատանեկական տարիներս, կհիշեմ և քեզ, որովհետև այդ ժամանակներեն, բառին իսկական իմաստով, մնացած ենք ես և դուն: Շատ սիրալիր և հարգալիր բարևներ Ձեր ամուսնույն և զավակներուն և շատ ջերմ համբույր քեզ:

Ջապել Եսայան